ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՏՈՎԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

№ 07-01ՍԳ
<03 > հուլիսի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ պր – ն՝
Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Սարատովկա համայնքի ավագանու թիվ 16 որոշումը:
Առդիր՝ 1թերթ::

Համայնքի ղեկավար՝ Գ.Մարդոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, հասցե գ Սարատովկա,
հեռ. 099045550 ,էլ. փոստ՝ saratovka.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30 » հունիսի 2017 թվական, 16 –Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ <<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԲԸ-ԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 28-ի նիստի արձանագրության թիվ 16 քաղվածքը, համայնքի անվամբ կազմված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը 02022017-06-0004, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով , 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Քաղաքաշինության մասին >> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման , կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1. Տալ համաձայնություն <<Հայջրմուղկոյուղի >> ՓԲԸ-ի կողմից օգտագործվող Սարատովկա համայնքի սեփականությունը հանդիսացող Գետավանի դաշտավայր թիվ 4 փոստային հասցեում գտնվող 65,0 քմ մակերեսով շինության , զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0,027 հա հողամասերը անհատույց սեփականության իրավունքով <<Հայջրմուղկոյուղի >> ՓԲԸ-ին փոխանցելու վերաբերյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Վելիցյան Նորիկ Էդուարդի | | | |
| Քարտաշյան Գիվի Ռուսլանի | | | |
| Պողոսյան Արտակ Յուրիի | | | |
| Ավետիսյան Նարինե Սպարտակի | | | |
| Սարգսյան Անի Ռազմիկի | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մարդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՏՈՎԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

№ 07-10/ՍԳ
«04» հուլիսի 2017թ.

*ՀՀ Լոռու մարզպետ պր – ն՝*
*Ա. Նալբանդյանին*

*Կից ներկայացնում եմ Սարատովկա համայնքի ավագանու թիվ 17 որոշումը:*
*Առդիր՝ 2 թերթ:*

*Համայնքի ղեկավար՝* *Գ.Մարդոյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, հասցե գ. Սարատովկա,
հեռախոս 099045550
Է լ ․Փ ո ս տ` saratovka.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » հունիսի 2017 թվական, N 17 -Ա

**ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով Սարատովկա համայնքի ավագանին`

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Ընդունել ի գիտություն Սարատովկա համայնքի 2017 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը` համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Նորիկ | Վելիցյան | | | |
| Գիվի | Քարտաշյան | | | |
| Արտակ | Պողոսյան | | | |
| Նարինե | Ավետիսյան | | | |
| *Անի* | *Սարգսյան* | | | |

Սարատովկա համայնքի ղեկավար Գ.Մարդոյան

20 17 թ. հունիսի 30
Սարատովկա

Հավելված

Սարատովկա համայնքի ավագանու
30.06.2017թ. թիվ 17-Ա որոշման

Սարատովկա համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման 2-րդեռամսյակի վերաբերյալ համայնքի ավագանուն հաղորդում ներկայացնելու մասին

Եկամուտներ ընդ. – 4830,3 հ.դ.
որից՝

- Հողի հարկ – 1641,5 հ.դ.
- Գույքահարկ – 193,3 հ.դ.
- Պահուստային հողերի վարձավճար և արդյ – 1233,0 հ.դ.
- Տեղական տուրք - 12,0 հ.դ.
- դոտացիա - 1750,5հ.դ.

Ծախսեր 4740,3 հ.դ.
որից՝

- Վճարվել է աշխատավարձ - 3299,9հ.դ.
- Պարգևատրում - 235,0
- Կապի ծառայություն - 50,0հ.դ.
- Դպրոցի երեխաների տեղափոխում - 359,5հ.դ
- Մասնագիտական ծառայություն - 14,0 հ.դ.
- Գրասենյակային ծախս - 100,0 հ.դ.
- Տրանսպորտային ծախս - 200,0 հ.դ.
- Պարտադիր վճար - 81,9 հ.դ.
- Ճանապարհների մաքրում -400,0 հ.դ.

- վերջնական մնացորդ- 90,0 հ.դ.

Սարատովկա համայնքի ղեկավար՝ Գ.Մարդոյան